



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԴԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունիսի 2017 թվականի N 134 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ
ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77.1 և 77.2 հոդվածները, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.37-րդ, 1.38-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի հունվարի 12-ի N 5-Ա հրամանը՝

որոշում եմ

1. Հաստատել 2017 թվականի 3-րդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Աչաջուր, Գետահովիտ, Դիտավան և Ենոքավան համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողություն իրականացվելիք հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը համաձայն հավելվածի:
2. Հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի փետրվարի 10-ի N 01/15/577-14 հանձնարարականով ներկայացված համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական

հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող հսկողության հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:
4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):
5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ յուրաքանչյուր համայնքում հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:
6. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման* և զարգացման նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Հ.ԱՐՈՎՅԱՆ

2017թ. հունիսի 26
ք. Իջևան



2017 թվականի 3-րդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Աչաջուր, Գետահովիտ, Դիտավան և Ենոքավան համայնքներում իրականացվելիք վարչական հսկողության բնագավառը և վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

Հ/հ	Համայնքի անվանում	Իրականացվելիք վարչական հսկողության ժամանակա հատվածը	Իրականացվելիք վարչական հսկողության բնագավառ	Վարչական հսկողություն իրականացնող փաշտոնատար անձիք	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	Անուն, ազգանուն
1.	Աչաջուր	3-րդ եռամսյակ	բնապահպանություն, ՏԻՄ պարտադիր լիազորություններ, արտակարգ իրավիճակներ, առևտուր, աղբահանություն,	Խմբի ղեկավար, Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ափինյան, Սամվել Գևորգյան Աշոտ Մարդանյան Գագիկ Մատինյան Գուրգեն Հարությունյան Միքայել Ղալունյան
2.	Գետահովիտ		բնապահպանություն, ՏԻՄ պարտադիր լիազորություններ, արտակարգ իրավիճակներ, առևտուր, ֆինանսներ, աղբահանություն, հողաշինություն	Խմբի ղեկավար, Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ափինյան, Սամվել Գևորգյան Աշոտ Մարդանյան Գագիկ Մատինյան Գուրգեն Հարությունյան Ժորա Խաչատրյան

				<p>Միջայել Ղալումյան Համլետ Փիրումյան</p>
3.	Դիտավան	<p>բնապահպանություն, արտակարգ իրավիճակներ, ֆինանսներ, հողաշինություն</p>	<p>Խմբի ղեկավար, Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ</p>	<p>Ֆելիքս Ակիինյան, Սամվել Գևորգյան Գագիկ Մատինյան Ժորա Խաչատրյան Համլետ Փիրումյան</p>
4.	Ենդրավան	<p>բնապահպանություն, արտակարգ իրավիճակներ, առևտուր, աղբահանություն, հողաշինություն</p>	<p>Խմբի ղեկավար Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ</p>	<p>Ֆելիքս Ակիինյան, Սամվել Գևորգյան Գագիկ Մատինյան Գուրգեն Հարությունյան Միջայել Ղալումյան Համլետ Փիրումյան</p>

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Ֆ.ԱՓԻՆՅԱՆ

